ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Ք.Եղեգնաձոր Շահումյան 5 ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

21 .03.2016 թ.

ՎՁՄ ՇՀ ԾՁԲ- 15/3-05/16 գնման ընթացակարգի Շրջանակային համաձայնագրով Գնահատող հանձնաժողովի բացման նիստի...

**Նիստին մասնակցում էին .**

***Հանձնաժողովի նախագահ*** ՀՀ Վայոց ձորի մարզի փոխմարզպետ Մելսիկ Հարությունյանը,

***Հանձնաժողովի անդամներ***

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հայկ Կարապետյանը ,

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ ՆարինեՄաղաքյանը,

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ռուզաննա Հախվերդյանը,

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային բաժնի գլխավոր մասնագետՀրայր Ասատրյանը

***Հանձնաժողովի քարտուղար*** ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Անահիտ Սարգսյանը:

**1. ՎՁՄ ՇՀ ԾՁԲ- 15/3-05/16 ծածկագրով ներկայացված հայտերի բացման** մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ 1512000/մեկ մլն հինգ հարյուր տասներկու հազար դրամ/: Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են www.armeps.am էլեկտրոնային մրցութային համակարգի միջոցով ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետական կառավարչական հիմնարկում՝ ք.Եղեգնաձոր, Շահումյան 5 հասցեում:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները/անունները/ և հասցեները**

Սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակից/ներ/ը

| N | Մասնակցի անվանումը | Գրանցման վայրը ՀՎՀՀ | Չափաբաժնի համարը , որի համար հայտ է ներկայացրել |
|---|---|---|---|
| 1 | << Վիվեկա >> ՍՊԸ | 08910239<br>Vivekallcmail.ru | 1,2,3,4,5 |

**3 . Տվյալներ ՝սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտերը կազմելու և ներկայացնելու մասին**

<< Վիվեկա >> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**4.Տվյալներ ՝ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

ՎՁՄ ՇՀ ԾՁԲ- 15/3- 05/16 ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով << Վիվեկա >> ՍՊԸ-ն ներկայացրել է դիմում, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, գնային առաջարկ, ինչպես նաև սահմանված հայտարարություններ տեխնիկական միջոցների, ֆինանսական միջոցների,աշխատանքային ռեսուրսների և մասնագիտական փորձառության մասին:

**5.Տվյալներ ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

<< Վիվեկա >> ՍՊԸ -ի կողմից մրցույթին ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գները՝**

<< Վիվեկա >> ՍՊԸ-ի առաջարկած գները

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը / տառերով և թվերով |
|---|---|---|---|---|---|
| 1 | ԳԱԶ 3102 մակնիշի 461 11 համարանիշի տրանսպորտային ցի տեխնիկական սպասարկում | 183430 | 37570 | | 221000 /երկու հարյուր քսանմեկ հազար/ |
| 2 | ՎԱԶ 21074 մակնիշի 285 LL 11 տ.համարանիշի և 591 LU 18 համարանիշի տրանսպորտային երի տեխնիկական սպասարկում | 256400 | 52500 | | 308900/երեք հարյուր ութ հազար ինը հարյուր / |
| 3 | ՎԱԶ 21213 մակնիշի 961 LL 11 համարանիշի տրանսպորտային ցի տեխնիկական սպասարկում | 147500 | 30100 | | 177600/մեկ հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր/ |
| 4 | NISSAN-ALTIMA մակնիշի 271 SS 60 Պետ. համարանիշի տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկում | 191730 | 39270 | | 231000/երկու հարյուր երեսունմեկ հազար/ |
| 5 | HYNDAI-TUCSON մակնիշի 031 LL 55 Պետ՝ համարանիշի տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկում | 161850 | 33150 | | 195000/մեկ հարյուր իննսունհինգ հազար/ |

**6. Տվյալներ է առաջին և հաջորդար այլ տեղեր զբաղեցրած մացնակիցների վերաբերյալ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշման 44-րդ կետը

ՎՁՄ ՇՀ ԾՁԲ- 15/3-05/16 ծածկագրով մրցույթին հայտներկայացրած մասնակցի << Վիվեկա >> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և 1-5 չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել << Վիվեկա >> ՍՊԸ-ին ՝ որպես իրավերի պահանջներին բավարարող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

**7. Այլ անհրաժեշտ տեղեկություններ**

Հայտի գնահատումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային մրցույթային համակարգով, գնման հայտի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

ՎՁՄ ՇՀ ԾՁԲ- 15/3-05/16 ծածկագրերով կազմակերպված մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների հիման վրա գնահատող հանձնաժողովը որոշում է

1 . ՀՀ Կառավարության 2015 թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի առաջին ենթակետի պահանջների համաձայն հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. ՀՀ Կառավարության 2015թ. հունվարի 30-ի N105-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին պատվիրատուին ներկայացնելու որակավորման չափանիշները համապատասխանությունը հիմնավորող՝ փաստաթղթերը

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացությունը և կազմակերպությունների կողմից ներկայացրած փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը

Հանձնաժողով՝

Մ.Հարությունյան
Հ.Կարապետյան
Ն.Մաղաքյան
Ռ.Հախվերդյան
Հ.Աստրյան
Ա.Սարգսյան